ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ

4 հարցերի կարճ պատասխաններ

1 Որքա՞ն է աշխատաժամանակի նորմալ տևողությունը և թույլատրելի արտաժամյա աշխատանքի տևողությունը:

Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել **շաբաթական 40 ժամից:**
Արտաժամյա աշխատանքի դեպքում աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի կարող անցնել **օրական 12 ժամից** (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ **շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:**

Արտաժամյա աշխատանքի տևողությունը կախված է վերջինիս բնույթից: Որպես կանոն, արտաժամյա աշխատանքը **իրար հաջորդող երկու օրվա** ընթացքում չպետք է գերազանցի **4 ժամը,** սակայն օրինակ՝ եթե այն իրականացվում է պետության պաշտպանության կատարման համար, ապա արտաժամյա աշխատանքն **իրար հաջորդող երկու օրվա** ընթացքում չպետք է գերազանցի **8 ժամը:**

2 Որո՞նք են այն բացառիկ դեպքերը, երբ թույլատրվում է արտաժամյա աշխատանք:

Արտաժամյա աշխատանք թույլատրվում է.
ա) եթե կատարվում է **պետության պաշտպանություն,**
բ) անհրաժեշտ է **ավարտել սկսած աշխատանքը,** որը չէր կարող ավարտվել նորմալ աշխատաժամանակի ընթացքում, և որի դադարեցումը կարող է **առաջացնել վնասներ,**
գ) իրականացվում է այնպիսի մեխանիզմների կամ սարքավորումների **նորոգման կամ վերականգնման աշխատանքներ,** որոնց անսարքության հետևանքով ընդհատվել է զգալի թվով աշխատողների աշխատանքը,
դ) աշխատանքի չի ներկայացել հերթափոխային աշխատողը,
ե) կատարվում են **բեռնման կամ բեռնաթափման** և դրանց հետ կապված այլ աշխատանքներ,
զ) առկա է գործատուի պայմանագրային պարտավորությունների **անհապաղ կատարման անհրաժեշտությունը:**

3 Ի՞նչ սահմանափակումներ են առկա արտաժամյա աշխատանքի համար:

Սահմանափակումները կապված են **որոշակի խումբ անձանց հետ:** Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում՝

ա) **մինչև 18 տարեկան** աշխատողները,
բ) առանց արտադրությունից կամ աշխատանքից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում **սովորող աշխատողները դասերի օրերին,**
գ) առողջության համար **վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների** ազդեցության պայմաններում աշխատողները,
դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված **այլ պայմաններում** աշխատողները:

Հաշմանդամություն ունեցող անձիք կարող են ներգրավվել արտաժամյա աշխատանքի միայն **իրենց գրավոր համաձայնությամբ,** եթե բժշկական եզրակացությամբ դա նրանց **արգելված չէ:**



4 Որքա՞ն է արտաժամյա աշխատանքի վարձատրության չափը:

Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի **50 տոկոսից ոչ պակաս չափով:**